Տեղիս համալսարանի յայտնի պրոֆէսոր Նիկոլայկու աւագ-օրդինատոր բժ. Գ. Հայրապետեան պաշտօնապէս հաստատված է այդ կոչման մէջ։ Կարելի է ողջունել երիտասարդ բժիշկին այն համակրանքով եւ ուշադրութեամբ, որոնց արժանացել է նա համալսարանական վարչութեան եւ ուսանողութեան կողմից։ Որպէս լսում ենք, պ. Հայրապետեան սկսել է կազմել ժողովրդական ընթերցանութեան համար մի շարք տետրակներ մարդու նեարդային եւ հոգեկան հիւանդութիւնների մասին, որոնց հրատարակելու բժ. Ա. Բուդուղեան առանձին դրքոյկներով։ Ցանկալի կը լինէր, որ այդ աշխատութիւնները գրվէին հանրամատչելի, հետաքրքրական լեզուով, եւ նոյն ընդունելութիւնը գտնէին, որպիսին ունեցել են Բուդուղեանի գեղեցիկ հրատարակութիւնները։

Ա. Արզումանեանց

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Փետրվարի 1-ին

Այս րոպէին հեռացայ մի տխուր եւ սրտաճմլիկ տեսարանից։ Քաղաքիս 2-րդ մասում մի նոր շինվող երկյարկանի տան առաստաղը եւ վերին յարկի յատակները փլվել էին՝ իրանց տակովն անելով ութ հոգի—եօթ մշակներ եւ մի վարպետ։ Նրանցից չորսին արդէն հանեցին մեռած, երեքին՝ ծանր վիրաւորված, իսկ ութերորդին—վարպետին դեռ չէին գտել եւ փընտռում էին։

Փլուածքը առաջ էր եկել նրանից, որ ահագին լայնութեամբ շինութեան մէջտեղից միայն մի սիւն էր եղել հանված մինչեւ վերին յարկը, սիւնի վրա շինել էին յատակ, նրա վերայից էլ նորից պատեր՝ մինչեւ առաստաղը եւ ապա վրան առաստաղը։ Եւ այդ բոլորը կպցրած է եղել բէտոնէ-աղիւսներից շինված մի բարակ սիւնի վրա, որը չը դիմանալով քանդվում է եւ տեղիք տալիս վերոյիշեալ դժբաղդութեան։ Շինութեան դրսի պատը ծայրից նոյնպէս ճեղքվել է, որը կարող է քանդվել հէնց փողոցով կառքերի անցուդարձի շարժումից։

Պէտք է ասած, որ վերջին տարիներս շինութիւնները սկսել են սունկի պէս բուսնել մեր քաղաքում, թէեւ այդ հանգամանքը ամենեւին դեռ չէ նպաստել կացարանների էժանանալուն, եւ այդ բոլորը շնորհիւ այն նորաձեւ բէտոնէ-աղիւսների, որոնց պատրաստողների մէջ գների մրցում առաջ գալով, սկսել են ցէմենտը մախաղներով խառնել աւազի հետ, որը ձեռք տալուն պէս սկսվում է փշրվել։ Այժմ, շատ չնչին բացառութեամբ միայն, բոլոր շինութիւնները կառուցվում են այդ աղիւսներով եւ այն էլ առանց որ եւ է ճարտարապետի հսկողութեան, իրանց խելքի թելադրութեամբ։ Տասնեակ օրինակներ կան, որ պլաններ են վերցրած եղել միայն մէկ յարկանի տան համար, բայց յանկարծ շինութիւնը բարձրացել է երկու, երեք եւ մի քանիսն էլ չորրորդ յարկի։

Ի դէպ է ասել, որ այստեղ յայտնի Միքայէլեան փողոցի վրա մի հին շինութիւն է նորոգվում, որը մօտ ութ տարի ժամանակ բերդվում, ապա ութ տարի ամբարձութեամբ երկու արշին առաջ է ընկած դէպի փողոց։ Որքան մենք տեղեկացանք, քաղաքային վարչութեան եւ ոստիկանի մէջ համաձայնութիւն չէ կայացել գնի վերաբերմամբ, իսկ տանտէրն էլ օգտվելով անցեալ տարի հրատարակած նոր օրէնքից, որ եթէ պլանից դուրս հողատէրերի եւ քաղաքային դումայի մէջ համաձայնութիւն չէ կայանում հողի արժէքի վերաբերմամբ, հողատէրերին իրաւունք է տրվում շինութիւն կառ

տիճանի անհատական են։ Եւ միայն այն ժամանակ նրանց դաստիարակութիւնը կարող է նպատակայարմար լինել, երբ նա յարմարվում է ամեն մի երեխայի առանձնայատկութիւններին։ Դաստիարակութեան գործի համար պատիժների անհրաժեշտութեան անպայման հերքումը դատախօսը հաստատեց մի շարք համոզիչ օրինակներով եւ վերջացրեց իր խօսքը ֆերմագին գիմումով դէպի դաստիարակների բարի զգացմունքները։

—

Կիրակի, փետրվարի 4-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ տիկին Դարիա Զաքարեան Միրզոեանի յիշատակին նրա մահվան տարելիցի առիթով։ Հոգեհանգիստը պատուել էր իր ներկայութեամբ ամենայն հայոց Կաթողիկոսը։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մեզանում համարեա գարուն է. քաղաքում եւ շրջակայքում միանգամից ձիւնը հալվեց. մթերքների թանգութիւն է, գործի եւ առեւտուրի քեսատութիւն։ Սաստիկ տարածված է ինֆլուէնցա հիւանդութիւնը, որից զոհվեցին շատ հասակաւոր եւ մանուկ հիւանդներ»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Մեր հայոց ս. Աստուածածին եկեղեցին հիմա կարող է պարծենալ լաւ երգեցողութեամբ. եկեղեցու վարչութիւնը հրաւիրել է Աստրախանից դպիր պ. Սիմոն Կօրժենեանցին, որն իր չնորհալի ձայնով միանգամայն հիացնում է լսողին։ Ցանկալի էր, որ պ. Կօրժենեանց երգեցիկ խումբ պատրաստէր եկեղեցում երգելու համար տեղացի հայ պատանիներից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Պարիզ, փետրվարի 4-ին

Ժամանակակից Իտալիան իր ամենէն մեծ, ամենէն հոյակապ փառքերէն մէկը կորսնցուց։

Ջուզէպպէ Վէրդի մեռաւ։

Ամբողջ Իտալիան սուգի մէջ է։ Վարժարանները, թատրոնները, կառավարական ու հասարակական հաստատութիւնները փակուեցան։ Հանրային կեանքը կարծես դադրած է։

Անգլիոյ թագուհին երէկ մեռաւ։ Այսօր կը մեռնի Վէրդի։ Այս երկու դագաղներուն առջեւ անկարելի կըլլայ ինձի բաղդատութեան չը դնել Կառավարողն ու Ստեղծողը։ Մէկը որ՝ իր իշխանութիւնը հաստատած է մարմիններուն վրա, իսկ միւսը՝ մտքերուն ու սրտերուն վրա։ Իր մահէն ետք ինչ թողուց Վիկտորիա թագուհին. քանի մը ուելի կամ նուազ դժգոյն էջեր պատմութեան մէջ։ Իսկ Վէրդի իր ետեւ կը թողու գեղեցկութիւն, յուզում, կեանք։ Եւ, սակայն, մարդկային տխմարութիւնը կուզէ, որ Վիկտորիան շատ ուելի փառաբանուի քան Վէրդին։ Անտարակոյս, Վէրդիի անհետացումին առջեւ յարգանքն ու ցաւակցութիւնը տիեզերական են, բայց իր դագաղին չը պիտի ընկերանան թագաւորներ եւ իշխաններ։

—

Ֆրանսայի ամենէն մեծ թատերական քննադատներէն մէկը, Կատիւլ Մէնդէս, սա տողերը կը նուիրէ Վերդիի մահվան առթիւ.

«Վէրդի—այս անունը գրելուս պէս—ինձի կերեւի իբրեւ արտակարգ իրականացում մը՝ սիրոյ, լոյսի, ստուերի, ցաւի, դժբաղդութեան, յաղթանակի եւ ուրախութեան։ Անիկա բանաստեղծ-կիրքը եղաւ։ Ինչ որ ալ ըսեն իր վրա, Վէրդի ամենակարող կենսունակութեան հրաշալի ընդդ մը եղաւ եւ իր ուղեղ-սրտին մէջ—որովհետեւ բարձր արուեստագէտներու քով ուղեղն ու սիրտը մէկ են—կը պարունակէր պատառուած մարդկութեան ամբողջութիւն մը։ Օ՜հ, որքան հիանալի ու որքան բաղձալի է, տառապող, հնչուն հայելիի մը մէջէ մարդկային ամբողջ զգայնութիւնը արտայայտած ըլլալ։ Այդ հայելին եղաւ Վէրդի—հայելի, որ սակայն պատկերը կը ստեղծէ, երբ անիկա բացակայ է նոյն իսկ, հայելի, որ կէս օր կը ցոլացնէ, արեւին մարը մանելէն ետք իսկ, որովհետեւ իր մէջ ունի արեգակնային բոցը։ Վէրդի՝ իր տիեզերականօրէն մարդկային ընդդէն զատ կատարելապէս ու ճշմարտապէս իր երկրին արդիւնքն ըլլալու առաւելութիւնն ունեցաւ։ Ինքը իտալացի մըն է, պատուական իտալացի մը, որ մեռաւ։ Մեր՝ ֆրանսական, գերմանական, անգլիական, ամերիկեան հիացումները իզուր զինքը իրենց համար պիտի պահանջէին։ Այս հիանալի երաժիշտը «իր երկրէն» է եւ մեր «ամենուս երկրին» մէջ ծափահարուեցաւ։ Ա՜հ, որքան աւելի շատ կը սիրեմ զինքը ասոր համար եւ որքան բաղձալի պիտի ըլլար քաղաքական ընդհանուր միաբանութիւնը, ուրկէ պիտի ծնին եւրոպական միացեալ-նահանգները, այնքան ցաւալի պիտի ըլլար տարբեր ցեղերու բանաստեղծական առանձնայատկութեանց նոյնութիւնը, որ երաժշտութիւններու եւ քերթուածներու զմայլելի տարբերութիւնը պիտի ջնջէր։ Ամեն երկիրներու ամբողջ արուեստագէտներուն նոյնութիւնը սոսկալի տգեղ պիտի ըլլար։ Ալ չը պիտի կրնայինք ճամբորդել օտար ցնորքին մէջ։ Հիանանք, չիւրացնենք։ Որքան կը գովեմ Վէրդին, իր իտալացի ըլլալուն համար մանաւանդ։ Բան մը սակայն զիս մտահոգ կընէ. Վէրդի՝ ցեղով ու հանճարով այնքան իտալացի՝ իր երաժշտութիւնը Իտալիայէն չը բաղխեցուց, իր ներշնչումը տարածեց այնքան գործերու վրա, որ երկրին մէջ ծնած չէին երբէք։ Ա՜հ, կը խոստովանիմ, այս առարկութիւնը բաւական ծանր է։ Ահաւասիկ մարդ մը, որ իր մէջ իր ցեղին ամբողջ ուժը, ամբողջ յորդող, գորովալից, կատաղի, ցնորական ու հրաշալիօրէն երգող ու պարող խենդութիւնը ունի ու ինչպէս այս ամենը չը շահագործէր՝ նիւթերուն ընտրութեամբ, ստեղծելու համար իր երկրին մէջ, զոր կը պաշտէ եւ ուրկէ կը պաշտուի, ճշմարտապէս ազգային, երաժշտա-դրամատիքական արուեստ մը։

«Արդարեւ կարելի չէ ուրանալ թէ Վէրդի, սպանիական գլուխ-գործոցներուն սարկօրէն հետեւողներուն կամ Շէքսպիրն ու Շիլլերը գողացողներուն կամ Հիւգոն ու Դիւման ընդօրինակողներուն հնազանդելով, երբէք իր արտայայտութեան ամբողջ կարողութիւնը չը նուիրեց, իր ազգին աղիքներէն իսկ բղխած դրամայի մը։ Անտարակոյս, ասիկա շատ ցաւալի է։ Ինչ երաժշտական դրամա պիտի կըրնար Վէրդի ստեղծել Իտալիոյ մէջ, եթէ նոյն իսկ Իտալիայէն, Իտալիոյ հոգիին խորերէն վերցուցած ըլլար ժողովրդական ու գրական նիւթերը իր գործերուն, որ աշխարհի ամեն կողմէ պիտի ճառագայթէին ու մի եւ նոյն ատեն այնքան սեփական պիտի մնային այն հողին ուրկէ ծնան։

«Վէրդի, իրեն բերուած դրքոյկները (livret) կընդունէր առանց մեծ ուշ դարձնելու, թերեւս անտարբեր, այն համոզումով թէ ուրկէ որ ալ գան անոնք, պիտի կրնար ինքը անոնց դրոշմել իր «ազգայնութեան» բնագրը։ Ու առիթը կը փնտռէր միայն ուրիշներու մէջ ինքը՝ սեպհական Վերդին ըլլալու։ Ու արդարեւ, Բայրընի, Շիլլերի, Հիւգոյի եւ ուրիշներու հակառակ, ինքն էր, այսինքն ամբողջ երջանիկ, դառն, անգութ, զուարթ ու ճաճանչող Իտալիան։ Յետոյ, եկաւ ժամ մը՝ ուր Վէրդի ներշնչումով լեցուն, փառքով ճառագայթարձակ, ծափահարուած, խնկարկված, սիրված ու մէկ մարդու մը մէջ ամբողջ ժողովուրդ մը խտացուցած՝ խորհեցաւ թէ բաւական չէր թերեւս իրեն պէս հանճարի մը համար միակ ցեղի մը ջերմ ուրախութիւնն ու խոր անձկութիւնը ցոլացուցած ըլլալ։ Իր ընդդին ամբողջ ճիգերը ժողովեց բոլորովին նոր, գրեթէ օտար մտածումի մը հոյակապ բարձրութեան մէջ։ Զը գիտեմ բան մը այնքան պատկառելի, այնքան յուզող որքան տեսարանը փառքով շրջապատված ու փառաւորվելու արժանի մարդու մը, որ իր յաղթանակին արդէն գագաթնակէտը հասած, կը խորհի յանկարծ թէ՝ այդքան երկրպագութիւններու իրաւունք ունենալու համար թերեւս պէտք եղածը ըրած չէ ու կը սկսի աշխարհին տալ իր առաջին գործերէն տարբեր գործեր, որ յառաջդիմութեան մէջ նոր քայլ մըն են ու կուզեն ապագային արժանանալ։

«Զեմ կարծեր որ արուեստի պատմութեան մէջ գտնուի երբէք վայրկեան մը այնքան նշանակելի, որքան այն վայրկեանը՝ ուր «Տրուբադուրի» հեղինակը պատրաստվեցաւ ըլլալու Դոն-Կարլոսի հեղինակը։ Ու ոմանք յուսացին թէ Իտալիայ մէջ, երաժշտական ողբերգութիւն մը, երաժշտական կատակերգութիւն մը պիտի ծնունդ առնէր։ Ու մէջ տեղ եկաւ Այիդան, Օտելլօն, Ֆալստաֆը»...

Վէրդի՝ այս մտածումի ու արուեստի մարդը վայրկեան մը իր մէջ խտացուց գործունէութեան ալ մարդը. ինքը աշխատեցաւ իտալական անկախութեան ու անկախութենէ ետք հայրենիքի միութեան համար։ Իր ժողովրդականութիւնը զինքը ղրկեց Իտալիոյ ծերակոյտին մէջ. բայց Ռիգոլէտտոյի հեղինակը՝ քաղաքականութեան փոթորկալի ու աղտոտ մթնոլորտէն նախամեծար հաւարեց հայեցողութեան ջինջ ու սրտապնդող կեանքը։ Կենդանի արդէն՝ անմահութիւնը ճանչցաւ, որովհետեւ ոչ միայն իր հայրենիքը զինքը կաստուածացնէր, այլ եւ Եւրոպան ու Ամերիկան իր հանճարին ոտքերուն տակ կը նետէին իրենց հիացումին էն գեղեցիկ ու էն հազուագիւտ ծաղիկները։

Ութսուն եւ եօթը տարեկան, հողին վրա բան մը չը պակսեցաւ իրեն, հարստութիւն, փառք, հիացում։ Սա բանով միայն տարբերեցաւ հանճարի իր միւս եղբայրներէն,—մինչդեռ անոնք իրենց կեանքը թշուառութեան մէջ կաւարտեն ու գրեթէ անօթութենէ կը մեռնին, Վէրդի միլիոններ կը գցէ իր ազգականներուն։ Աւելի աղէկ. մարդկութեան հաւար նախատինք մը պակաս կըլլայ։ Լոյսի ու արեւի երկիրը՝ Իտալիան՝ կրնայ առանց խըղճահարութեան, առանց ամօթի իր ամենէն մեծ զաւակներէն մէկուն՝ Վէրդիի հրաժեշտի վերջին ողջոյնը տալ։

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական պարլամենտի առաջիկայ նստաշրջանի բացումը մի առանձին հետաքրքրութիւն է զարթեցնում, որովհետեւ այս անգամ պէտք է բանայ թագաւորը անձամբ, մի բան, որ արդէն 15 տարի է տեղի չէ ունեցել Անգլիայում։ Լրագիրների ասելով՝ ինքը Էդուարդ թագաւորը այնպիսի հետաքրքրութեամբ է վերաբերվում այդ գործին, որ անձամբ վերահասու է լինում բոլոր պատրաստութիւններին։ Պարլամէնտի բացման հանդէսը, լրագիրների ասելով, իր փայլով եւ չքեղութեամբ պէտք է գերազանցէ այն բոլոր բացումները, որոնք տեղի են ունեցել այս վերջին հարիւրամեակի ընթացքում։ Վիկտորիա թագուհին երբէք բաց չէ արել պարլամենտը լիակատար հանդէսով։ Առաջիկայ հանդէսը պէտք է կայանայ հետեւեալ կարգով։ Էդուարդ VII կը գնայ պարլամենտ մի հինօրեայ ահագին կառքով, որ չէ երեւացել Լօնդոնի փողոցներում սկսած 1863 թուից, այսինքն այն տարվանից, երբ պակվում էր այժմեան թագաւորը։ Այդ ահագին եւ ծանր կառքին կը լծվեն ութը ձիեր, որոնց սանձերից բռնած կը լինեն ութ ձիապաններ։ Արքայական կառքին կը հետեւեն ուրիշ վեց կառքեր, որոնց մէջ նստած կը լինեն պրինցներ եւ պրինցուհիներ։ Այս կառքերը լծված կը լինեն վեց-վեց ձիերով։ Ամբողջ ճանապարհի վրա, Բուկինհամի պալատից մինչեւ պարլամենտ, կանգնած կը լինեն զօրքեր։ Արքայական գնացքի տեւողութեան ժամանակ տեղի կունենայ անընդհատ թնդանօթաձգութիւն։ Բայց հանդէսի ամենաշքեղ մասը կը կատարվի լորդերի ժողովում։ Առանձին սենեակում թագաւորը կը ձգէ իր վրա ծիրանի եւ հանդիսականները կը մտնեն նիստերի դահլիճը։ Բոլոր լորդերը հագած կը լինեն ծիրանի թիկնոցներ, իսկ նրանց կանայք—ոսկի զգեստներ՝ զարդարված թանգագին քարերով։ Լորդերի ժողովի հանգամանքը փոքր դահլիճը չէ կարող տեղաւորել բոլոր հրաւիրվածներին։ Տեղերի մեծ մասը, ուր սովորաբար նստում են լորդերը, յատկացրած են կանանց, այնպէս որ երկու ժողովների անդամներից շատերը, մինիստրները եւ մինչեւ անգամ պրինցները ստիպված պէտք է լինեն կանգնած ներկայ լինել պարլամենտի բացմանը։

—Անգլիական լրագիրները հաղորդում են, թէ Էդուարդ թագաւորը փետրվարի 3-ին, պարլամենտի բացումից անմիջապէս յետոյ, կուղեւորվի Գերմանիա, տեսակցելու իր քրոջ, գերմանական այրի կայսրուհու հետ։ Այսուամենայնիւ հաստատ տեղեկութիւններ ունեցող շրջաններում ասում են, որ ուղեւորութիւնը դէպի Գերմանիա տեղի կունենայ աւելի ուշ, թէպէտ եւ հաստատում են այն փաստը, որ արքայական «Albert» զբօսանաւը հրաման է ստացել պատրաստ լինելու ուղեւորութեան փետրվարի 3-ին։

—«Սատէտ» լրագրին Թաւրիզից գրում են, որ այնտեղ է եկել Թիւրքաց ընդհանուր կոմիսար Հաժդի-փաշան։ Նրան յանձնարարված է զսպել քիւրդ աշիրաթներին, որոնք սիստեմատիքաբար անցնում են Թիւրքաց սահմանը խաղաղ բնակիչների վրա յարձակում գործելու եւ քարվանները կողոպտելու համար։ Կոմիսարի ձեռքում գտնվում է այն բոլոր գոյքերի ցուցակը, որ քիւրդերը կողոպտել են Վանի վիլայէթի Գեայուրեան եւ Աշրէկեան շրջաններում եւ նա յետ է պահանջում այդ բոլոր գոյքերը՝ ըստ պատկանելոյն վերադարձնելու համար։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

3 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մեծ Իշխանուհիներ Կսէնիա Ալէքսանդրօվնայի եւ Մարիա Գէօրգիեվնայի հովանաւորութեան տակ յօգուտ «Եսալի» ընկերութեան Գոլէնկօի եւ Դոլինայի կազմած կօնցէրտը ահագին աջողութիւն ունէր։ Հաւաքված է 13,000 ռուբլի։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը յայտնեց ռուսաց դեսպանին համաչափական մաքսահարկ դնելու մասին ռուսաց շաքարի վրա։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Տեղացիները դադարեցնում են աշխատանքները ժամտախտի երեւալու պատճառով։ 5,000 տեղացիների անունից պատգամաւորութիւնը յայտնեց իշխանութիւններին, որ, ժամտախտի պատճառով, տեղացիները հրաժարվում են աշխատելուց եւ կամենում են հայրենիք վերադառնալ. իշխանութիւնները ուշացնում են թոյլտուութիւնների տալը։ Աշխատանքները նաւարաններում դադարեցին։

ԿՐՕՆԲԷՐԳ։ Գերմանական այրի կայսրուհու առողջական դրութիւնը գոհացուցիչ է։

ՍՕՖԻԱ։ Այստեղի հրայանձգային ընկերութեան կազմած ժողովում, ուր ներկայ էին մինչեւ հազար մարդիկ, որոշում կայացաւ խնդրելու, որ կառավարութիւնը չարձակէ հրացանաձգային ընկերութիւնը եւ հաստատէ նրա կանոնադրութիւնը։

4 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 3-ին «Міръ Искусства» ամսագրի պատկերների ցուցահանդէսն այցելեցին Թագաւոր Կայսրը եւ Հէսսէնեան Էրնստ մեծ դուքսը։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հեռագրում է Դէսարից. «Դէվէտի ոյժերը երէկ մինչեւ լուսաբացը անցան երկաթուղու վրայով Բարտաս-Սայդինգի մօտ, Դէսարից դէպի հիւսիս։ Գլուխէր քայլ առ քայլ հետամուտ էր լինում թշնամուն. գընդապետ Կրաբբէի հրամանատարութեան տակ գտնվող զրահապատ գնացքները աշխատում էին չը թոյլ տալ թշնամուն անցնել ճանապարհը։ Բօէրները, սակայն, պայթեցրին ռէլսները դէպի հիւսիս եւ դէպի հարաւ այն տեղից, որով անցան։ Անգլիացիները աւար վերցրին աւելի քան քսան փուրգօն ռազմամթերքներով, Մաքսիմի մէկ թնդանօթ, հարիւր ձիերից աւելի. քսան բօէրներ գերի են առնված։ Անգլիացիները հալածում են բօէրներին։

ՊԷԿԻՆ։ Այսօր ստորագրված համաձայնութեան համեմատ, Շանդհայ-Գուան-Պէկին երկաթուղին կը յանձնվի անգլիացիներին մինչեւ փետրվարի 15-ը։

ՍՕՖԻԱ։ Իշխանորդի Բօրիսի առողջական դրութիւնը վատացաւ։

Պետրօվի մինիստրութիւնը հրաժարական տուեց, գտնելով, որ համարում է իր գործը՝ ընտրութիւնների վերաբերմամբ, վերջացած։

ՊԷԿԻՆ։ Չինական լիազօրները հաղորդում են պալատին, որ դեսպանների որոշումը անդարձ է, բայց որ Տունֆուսիանի վերաբերմամբ դատավճռի կատարումը կարող է յետաձգվել։

Վալդերզէյ պաշտօնապէս հերքում է հաղորդագրութիւնը այն բանի մասին, որ իբր թէ գերմանական զօրքերը հեռանում են Զինաստանից. նա յայտնում է, թէ չէ կարող ոչ մի զինուոր ուղարկել, մինչեւ որ դրա համար հրաման չը ստանայ Բերլինից, իսկ այդպիսի հրաման նա չէ ստացել։

ԲԵՐԼԻՆ։ Բոլորովին անհիմն է այն տեղեկութիւնը, որ գեներալ-ադիւտանտ ֆօն-Վերդեր իբր թէ ուղեւորվում է Պետերբուրգ մի քանի թիւրիմացութիւններ վերացնելու համար. վերոյիշեալ թիւրիմացութիւնները գոյութիւն չունեն։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ռուսաց դեսպանը Մակ-Կինլէյին յանձնեց մի ալբոմ՝ Ռուսաց Կայսրի թագադրութեան տեսարանների նկարներով, որպէս պարգեւ Թագաւորից ի նշան բարձր յարգանքի դէպի նախագահը. վերջինս խնդրեց դեսպանին յայտնել Նորին Մեծութեանը իր չնորհակալութիւնը։

ՖԻԼԻՊՊՈՊՕԼ։ Թագաժառանգ իշխանորդի Բօրիսը կրկին հիւանդացաւ կարմրուկով. բացի դրանից, բրոնխիտի սաստիկ նշաններ երեւեցան աջ թոքի մէջ։ Պրոֆէսսոր Էչերիխ եկաւ Ֆիլիպպոպոլ։

ԿԱՐԼՕՎԻՑ։ Արտակարգ գնացքով այստեղ եկած Միլանի մարմինը դիմաւորելու համար կայարանում կանգնած էր սպասաւոր պահակախումբը, որը զինուորական պատիւներ տուեց, մի եւ նոյն ժամանակ երաժշտութիւնը նուագում էր սերբական հիմնը։ Կայարանից մարմինը տարվեց միտրոպոլիտական եկեղեցին, ուր պատրիարքը հոգեհանգիստ կատարեց բազմաթիւ հոգեւորականութեան ներկայութեամբ, ձայնակցութեամբ բոլոր զանգակների զողանջիւնի։ Կէս օրից յետոյ մէկ ժամին մարմինը փոխադրվեց Կրուշէդոլեան վանքը, ուր տեղի ունեցաւ թաղումը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ֆինանսական քարտուղար Գէջ վճռեց բարձրացնել լրացուցիչ մաքսահարկը բէլգիական շաքարի վրա էլ, պրէմիայի համաչափ։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Կառավարչական «New-York-Tribune» լրագիրը, քննելով ռուսաց շաքարի վրա դրված հատաչափ մաքսահարկը եւ զանազան լրագիրների ֆանտաստիական շտախօսութիւնները մաքսային պատերազմի մասին, ասում է. «Մաքսային պատերազմով ոչ մի սպառնալիք չէ կարող աղդել մեր գործողութիւնների վրա։ Մենք պարտաւոր ենք մեր խօսքի տէրը լինել Գերմանիայի եւ ուրիշ աղգերի վերաբերմամբ։ Եթէ Միացեալ-Նահանգները նպաստէին Ռուսաստանին ի Ջաս Գերմանիայի, անկասկած է, որ դա հատուցում կառաջացնէր Գերմանիայի կողմից. իսկ մաքսային պատերազմը Գերմանիայի հետ աւելի եւս Ջասակար կը լինէր Ռուսաստանի հետ պատերազմից։ Մեր յարաբերութիւնները Գերմանիայի հետ անհամեմատ աւելի սերտ են, քան Ռուսաստանի հետ. մեր արտահանական առեւտուրը Գերմանիայի մէջ տասն եւ ութ անգամ աւելի նշանաւոր է. անմիջական հաշիւ տեսակէտից մենք աւելի եւս պէտք է հոգ տանենք բարեկամական յարաբերութիւններ պահպանել Գերմանիայի հետ, քան Ռուսաստանի հետ, բայց շաքարի հարցը պէտք է վճռվի բարձր տեսակէտից պատշաճաւոր վրատահութեամբ եւ դաշնագրային պարտաւորութիւնների եւ սահմանային օրէնքի կանոնաւոր բացատրութեամբ. հէնց այդպէս էլ կը պատահի, եւ այդպիսով ամեն տեսակ խօսակցութիւններ մաքսային պատերազմի մասին ի դերեւ կելնեն»։

5 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փետրվարի 4-ին արտասահման ուղեւորվեց պրինց Ալէքսանդր Պետրովիչ Օլդենբուրգսկի։

ՍՕՖԻԱ։ Կառավարչական օրգան «Սվետ» եւ ստամբուլցիականների օրգան «Նովիյ Վեկ» եռանդուն յօդուածներ հրատարակեցին մակեդոնական կոմիտէի դէմ, որի գործունէութիւնը Բոլգարիայում դիւանագիտական դժուարութիւններ է յարուցանում։

ՍՕՖԻԱ։ Իշխանորդի Բորիսի բրոնխիտ հիւանդութիւնը փոխվեց թոքերի բորբոքման. ուստի Ֆէրդինանդ իշխանը խնդրեց Բորիս Պետրովիչին շարունակել պաշտօնը մինչեւ որ որդու առողջութեան վիճակը բաւականաչափ անդորրութիւն կը տայ նրան, որպէս զի նա կարողանայ դիմել կուսակցութիւնների պարագլուխներին մինիստրութիւն կազմելու առաջարկութեամբ։

ԲՐԻՍԷԼ։ Երէկ Լէյդս Հասդայի հարսանիքային հանդէսներից վերադարձաւ այստեղ։ Այն ժամանակ, երբ նա հէնց նոր վերադարձել էր եւ նրա իրեղէնները առանց հսկողութեան դըրած էին նախասենեակում, գողերը տարան նրա պայուսակը, որի մէջ գտնվում էին քաղաքական թղթեր։ Գողերը ներս էին մտել յարմարացրած բանալիի օգնութեամբ. իսկոյն իմաց տրվեց ոստիկանութեան։

ԿՐՕՆԲԷՐԳ։ Գերմանական այրի կայսրուհու առողջութեան վիճակը շատ զոհացուցիչ է։

ԴԷԱԱՐ։ Դէվէտ եւ Շտէյն երկու հազար հոգուց բաղկացած զօրաբաժնով եւ երկու թընդանօթներով անցան երկաթուղին Գօուտկրաալից դէպի հիւսիս։ Անգլիական թնդանօթները ցրվեցին թշնամուն, որի թնդանօթները կուին չը մասնակցեցին։ Զրահապատ գնացքը սկսեց կրակել ծովային թնդանօթները։ Անգլիացիներին աջողվեց խլել Դէվէտի ամբողջ սայլախումբը, ի միջի այլոց հարիւր հազար փամփուշտ, մեծ քանակութեամբ ռազմամթերք եւ մի արագահար թնդանօթ։ Անգլիացիների կորուստն է երեք վիրաւոր։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Կարծում են, որ Ռուսաստանի եւ Միացեալ-Նահանգների առեւտրական յարաբերութիւնների մէջ ծանր ճգնաժամ է սկսվել։ Ռուսաց ֆինանսների մինիստրի կարգադրութիւնը կառաջացնէ մաքսահարկերի 50%-ով բարձրացումը ամէրիկական մեքենաների եւ մետալագործական արդիւնաբերութեան արդիւնքների, վախենում են, որ այդպիսի դրութիւնը արգելաւորթ կը դառնայ այդ արդիւնքների արտահանութեան դէպի Ռուսաստան։ 1900 թ-ին այդ արտահանութիւնը հասաւ 30 միլիոն դոլլարի։

ԴԷԱԱՐ Բրիւս Համիլտոնի բրիգադան հասաւ այստեղ. Կարնարվոնից հաղորդում են Դէլիլի զօրասիւնի գալու մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետերբուրգի հանրային խորհուրդը որոշեց. այս տարի փետրվարի 8-ին չը կատարել հանդիսաւոր ակը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, փետրվարի 8-ին
Ի պատիւ Վարդանանց տօնի հայ դերասանական ընկերութիւնը
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝
I
ԱՐԾԱԿ Բ.
Պատ. ողբ. 5 արար. հեղ. Խ. Գալֆայեանի
II
ԳԻՇԵՐՈՒԱՑ ՍԱԲԸ ԽԷՐ Է
Վոդ. 1 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան։
Ժողովարանի ոչ-անդամները մուտքի համար առանձին չեն վճարում։
Տոմսակները վաճառվում են ժողովարանի շվէյցարի մօտ։ (Ե. Չ. Հ.) 1—3

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ,
որ սովորել է քաղաքային դպրոցում եւ վարել է ուսուցչական պաշտօն զանազան քաղաքներում եւ գիւղերում, այժմ ցանկանում է մտնել ծառայութեան՝ գործարաններում, առեւտրական տներում, կամ վարել տնային ուսուցչի պաշտօն։ Ցանկացողները կարող են դիմել «Մշակի» խմբագրատունը։

Թարգմանւում է
Զօլաի «ՓՈՂ» (Деньги) վէպը։
4—1 Հ. Մելքումեանց

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Չորեքշաբթի, փետրվարի 14-ին, նշանակված է երկրորդ անգամ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
պ.պ. անդամների, յունվարի 30-ին չը կայացած ժողովի փոխարէն, քննելու համար 1900 թ-ի հաշիւը եւ բալանսը. 1901 թ-ի նախահաշուի հաստատումը. 3 աւագների եւ 6 կանդիդատների ընտրութիւնը եւ կանդիդատների քուէարկութիւնը։

Տալիս եմ մասնաւոր դասեր
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻՑ
Հասցէս՝ Тройцкая улица, домъ № 11. кв. Мелкумова.

Վաճառվում է արտասահմանեան եւ տեղական
ԲՕԺՕԺԻ ՑԵԼՈՒԼԵԱՐՆԻՑ
զանազան տեսակի եւ յայտնի ֆիրմանների ՍԵՐՄ, կովկասեան չերամապահական կայարանի սպիտակ փաթեթներով։ Ցանկացողները վաղօրոք պիտի դիմեն. Тифлисъ, Галусту Галустьяну. 8—10

ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ
„ՆԱՄՈՒՍ,,
վէպը, II տպագրութեամբ, լոյս կը տեսնի յունվարի վերջին։ Դիմել՝ Баку, Александру Абелянцу. Գինը ճանապարհածախսով 1 բուբլի։ Գրավաճառներին զիջումն։ 9—10

Պետերբուրգի բժշկական վաչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 բ. եւ 1 բ. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ արուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 բ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուչկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրմանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Մէրքայերեան կամուրջի վրա, Զապօվի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։
53—100

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ է մնում Թիֆլիսի «Մշակ» խմբագրատունը։ Ամենայն հարցերի համար, որոնք վերաբերվում են «Մշակի» խմբագրատունը ուղարկվող գրութիւնների, ինչպէս նաև գրաստների, գրաստի գնի, գրաստի գնի փոխանակման, գրաստի գնի ուղարկման, գրաստի գնի ստացման, գրաստի գնի վերադարձման, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների մասին։

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ է մնում Թիֆլիսի «Մշակ» խմբագրատունը։ Ամենայն հարցերի համար, որոնք վերաբերվում են «Մշակի» խմբագրատունը ուղարկվող գրութիւնների, ինչպէս նաև գրաստների, գրաստի գնի, գրաստի գնի փոխանակման, գրաստի գնի ուղարկման, գրաստի գնի ստացման, գրաստի գնի վերադարձման, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների մասին։

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ է մնում Թիֆլիսի «Մշակ» խմբագրատունը։ Ամենայն հարցերի համար, որոնք վերաբերվում են «Մշակի» խմբագրատունը ուղարկվող գրութիւնների, ինչպէս նաև գրաստների, գրաստի գնի, գրաստի գնի փոխանակման, գրաստի գնի ուղարկման, գրաստի գնի ստացման, գրաստի գնի վերադարձման, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների մասին։

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ է մնում Թիֆլիսի «Մշակ» խմբագրատունը։ Ամենայն հարցերի համար, որոնք վերաբերվում են «Մշակի» խմբագրատունը ուղարկվող գրութիւնների, ինչպէս նաև գրաստների, գրաստի գնի, գրաստի գնի փոխանակման, գրաստի գնի ուղարկման, գրաստի գնի ստացման, գրաստի գնի վերադարձման, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների մասին։

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ է մնում Թիֆլիսի «Մշակ» խմբագրատունը։ Ամենայն հարցերի համար, որոնք վերաբերվում են «Մշակի» խմբագրատունը ուղարկվող գրութիւնների, ինչպէս նաև գրաստների, գրաստի գնի, գրաստի գնի փոխանակման, գրաստի գնի ուղարկման, գրաստի գնի ստացման, գրաստի գնի վերադարձման, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների մասին։

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ է մնում Թիֆլիսի «Մշակ» խմբագրատունը։ Ամենայն հարցերի համար, որոնք վերաբերվում են «Մշակի» խմբագրատունը ուղարկվող գրութիւնների, ինչպէս նաև գրաստների, գրաստի գնի, գրաստի գնի փոխանակման, գրաստի գնի ուղարկման, գրաստի գնի ստացման, գրաստի գնի վերադարձման, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների մասին։

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ է մնում Թիֆլիսի «Մշակ» խմբագրատունը։ Ամենայն հարցերի համար, որոնք վերաբերվում են «Մշակի» խմբագրատունը ուղարկվող գրութիւնների, ինչպէս նաև գրաստների, գրաստի գնի, գրաստի գնի փոխանակման, գրաստի գնի ուղարկման, գրաստի գնի ստացման, գրաստի գնի վերադարձման, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների, գրաստի գնի ուղարկման ուղիների, գրաստի գնի ստացման ուղիների, գրաստի գնի վերադարձման ուղիների մասին։

ОТКРЫТА ПОДПИСКА
на 1901 годъ
на издающійся въ Тифлисѣ политическую и литературную ежедневную газету
НОВОЕ ОБОЗРѢНІЕ
(XVIII годъ изданія)

Газета будетъ выходить въ 1901 году подъ прежней редакціей и по прежней программѣ.
Съ цѣлью удовлетворить все болѣе развивающуюся потребность въ чтеніи, ФОРМАТЪ газеты съ конца нынѣшняго года будетъ УВЕЛИЧЕНЪ.

Условія подписки
Съ доставкой и пересылкой:
На 12 мѣсяцевъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р.
За границу: на годъ 17 р., на полгода—9 р., на 3 мѣсяца—5 р.
Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р. Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—7 р., на полгода—4 р.
Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа каждаго мѣсяца. Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Барятинская ул., д. № 8.
Книги, издаваемыя редакціею, будутъ продаваться подписчикамъ „Нов. Об." съ уступкою 50%. 3—3

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին։—XVI—XVII դար
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ
Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, Редакція «Мшакъ». 10—10

Շաբաթ, 1901 թ. փետրվարի 10-ին
«ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ» չինութեան մէջ տեղի է ունենալու
ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
„ՎԱՐԴԱԳՈՅՆ ԴՕՄԻՆՕ"
Զրի եւ էժանագին ճաշարանի դրամական միջոցները աւելացնելու նպատակով
Տիկիններին խնդրում են լինել դիմակով եւ վարդագոյն դոմինոյով։ Այն տիկինները, որոնք չեն ցանկանայ դիմակներով լինել, վճարելու են 50 կոպէկ տուգանք։
Սկիզբը 10 ժամին։
Տոմսակի գինն է 2 բուբլի 10 կոպէկ։
Տիկինների համար անուանական տոմսակներ կարելի է ստանալ հետեւեալ անձանց մօտ.
Տիկ. Մ. Ա. Աքիմեան, Կոնսուլսկայա, 4. Իշխ. Վ. Գ. Բարատովա, Բէլոուսովսկայա, սեփ. տուն.
Տիկ. Ե. Մ. Թայիրեան, Լաբօրատորնայա, 6. Իշխ. Ն. Ի. Թումանեան, Բեբուտովսկայա, 17.
Տիկ. Մ. Վ. Ծովիանեան, Սերգիեվսկայա եւ Լերմոնտովսկայա փողոցների անկիւն, 10։
(կիր. երեք. հինգ. շաբ.) 1—4

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ
նկարչական-գեղարուեստական արհեստանոցը
ընդունում է սրբերի պատկերների, կենդանագրերի, ոսկեզօծ ցուցանակի (вывѣска), դէկորացիաների, ներկարարական աշխատանքների պատուէրներ եւ տալիս եմ նկարչութեան դասեր։
Գ. Գ. ԲՕԳԱՏԻՐԵՕՎ
Արհեստանոցը գտնվում է Վերայի զառիվայրի վրա, Կօրգանովսկայա փողոցի անկիւն, տուն Մերուրնութովի։ 1—1

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում
ծախվում են հետեւեալ նոր գրքերը՝
Լէօ, Հայկական տպագրութիւն, ա. հատոր, Թիֆլիս, 1901 թ., գ. 1 բ. 50 կ.
Մխիթարեանց Ա., Տաղեր ու խաղեր, չորս բաժանմունքով, Ալէքս. 1900 թ., 60 կ.։
Մօլիէռ, Թաչող բժիշկն, թատերական, Բագու, 1900 թ., գ. 25 կ.։
Տաղաւարեան Ն. դոկտ., Բառացուցակ ախտանուանց ֆրանսերենէ ի հայ, բ. տպ. Կ. Պոլիս, 1901 թ., 30 կ.։
Տէր-Գաբրիէլեանց Գ. քահ., Խորհրդածութիւններ Յիսուս Քրիստոսի չարչարանքների եւ մահվան մասին, Թիֆլ. 1900 թ. 1 բ.։
Տէր-Գրիգորեան Է., Դամոկլեան սուր, դրամա 8 արար. բ. տպ. Երեւան 1900 թ. 75 կ.։
Լէօ, Մէլիքի Աղջիկը (սակաւաթիւ) 1 բ. 30 կ.։
Ռաֆֆի Զահրումար (սակաւաթիւ) գ. 2 բ.։
» Տաճկահայք, գ. 40 կ.։
Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Ե.) 3—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ։
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պօթ։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, յունվարի 31 (փետրվարի 13)—շոգենաւ՝ ԱՆԱՏՕԼԻ, կապիտան ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորական գներով։
Սմիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խոջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիքովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Չ.) 8—20

Дозволено цензурою, Тифлисъ, 5 Февраля 1901 г.
Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27